ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

քաղաք Հրազդան *13 ԱՊՐԻԼԻ 2023թ.*

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 05
ԱՎԱԳԱՆՈՒ ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ

Համայնքի ավագանու նիստին ներկա էին ավագանու 19 անդամներ:

Բացակա էին՝ Սևակ Միքայելյանը, Անդրանիկ Բաբայանը, Լևոն Գրիգորյանը, Գոհար Հակոբյանը, Գինեվան Ղազարյանը, Մոնթե Մաթևոսյանը, Արտեմ Ստեփանյանը, Մերի Տոնոյանը

Համայնքի ղեկավարի հրավերով ավագանու նիստին մասնակցում էին՝
Գուրգեն Հակոբյան, Զարիկ Վարդանյան

Նիստը վարում էր համայնքի ղեկավարի առաջին տեղակալ՝ Վարուժան Սաֆարյանը

Նիստը արձանագրում էր աշխատակազմի քարտուղար ՝ Ռոբերտ Դանիելյանը

Լսեցին
ՀՐԱԶԴԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2023 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 13-Ի N 05 ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՌՈԲԵՐՏ ԴԱՆԻԵԼՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասով.

1.Հաստատել Հրազդան համայնքի ավագանու 2023 թվականի ապրիլի 13-ի N 05 նիստի օրակարգը.
1) Հրազդան համայնքի ավագանու 2022 թվականի դեկտեմբերի 9-ի N 215 որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին
2) Հրազդան համայնքի ավագանու 2022 թվականի դեկտեմբերի 09-ի N 216 որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին
3) Հրազդան համայնքի ավագանու 2022 թվականի դեկտեմբերի 09-ի N 218 որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին
4) Հրազդան համայնքի ավագանու 2022 թվականի դեկտեմբերի 09 -ի N 238 որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին
5) «ՍԱՊՍԱՆ ԳՐՈՒՊ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը սեփականության իրավունքով պատկանող 6.49489 հա մակերեսով գյուղատնտեսական

նպատակային նշանակության վարելահողից 3.5հա մակերեսով հողամասի նպատակային և գործառնական նշանակության փոփոխության մասին
6) Հրազդան համայնքի ավագանու 2023 թվականի մարտի 10-ի N 43 որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին
2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Կողմ-19 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 71/

Լսեցին
ՀՐԱԶԴԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2022 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 9-Ի N 215 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՌՈԲԵՐՏ ԴԱՆԻԵԼՅԱՆ/

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով.

1.Հրազդան համայնքի ավագանու 2022 թվականի դեկտեմբերի 09-ի «Հրազդանի համայնքապետարանի «Կոմունալ տնտեսություն, աղբահանություն և սանմաքրում» հիմնարկի հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին» N 215 որոշման հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրը:

Կողմ-16 Դեմ-0 Ձեռնպահ-3

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 72/

Լսեցին
ՀՐԱԶԴԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2022 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 09-Ի N 216 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՌՈԲԵՐՏ ԴԱՆԻԵԼՅԱՆ/

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով.

1.Հրազդան համայնքի ավագանու 2022 թվականի դեկտեմբերի 09-ի «Հրազդանի համայնքապետարանի «Մաքուր Հրազդան» համայնքային ոչ առևտրային կազմակերպության հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին» N 216 որոշման հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորգրման օրը:

Կողմ-16 Դեմ-0 Ձեռնպահ-3

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 73/

Լսեցին

ՀՐԱԶԴԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2022 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 09-Ի N 218 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ.

/Զեկ. ՌՈԲԵՐՏ ԴԱՆԻԵԼՅԱՆ/

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով.

1. Հրազդանի համայնքի ավագանու 2022 թվականի դեկտեմբերի 09-ի «Հուղարկավորությունների կազմակերպման, գերեզմանատների, հուշարձանների պահպանման և շահագործման» համայնքային ոչ առևտրային կազմակերպության 2023 թվականի հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին» N 218 որոշման հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրը:

Կողմ-17 Դեմ-0 Ձեռնպահ-2

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 74/

Լսեցին

ՀՐԱԶԴԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2022 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 09 -Ի N 238 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԶԱՐԻԿ ՎԱՐԴԱՆՅԱՆ/

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով.

1. Հրազդան համայնքի ավագանու 2022 թվականի դեկտեմբերի 09-ի «Հրազդան համայնքի նախադպրոցական ուսումնական հաստատությունների, մշակութային և սպորտային հիմնարկների հաստիքացուցակները և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին» N 238 որոշման N22 հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրը:

Կողմ-16 Դեմ-0 Ձեռնպահ-3

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 75/

Լսեցին

«ՍԱՊՍԱՆ ԳՐՈՒՊ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ 6.49489 ՀԱ ՄԱԿԵՐԵՍՈՎ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՎԱՐԵԼԱՀՈՂԻՑ 3.5ՀԱ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ԵՎ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԳՈՒՐԳԵՆ ՀԱԿՈԲՅԱՆ/

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, 7-րդ հոդվածի 8-րդ մասով, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետով, «Քաղաքաշինության մասին» օրենքի 14^3-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N1918-Ն և N1920-Ն որոշումներով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության համայնքների քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի Կոտայքի մարզի Հրազդան քաղաքի գլխավոր հատակագծում առանձին հողամասի նպատակային և գործառնական նշանակության փոփոխության վերաբերյալ 2023 թվականի մարտի 31-ի N1/փ-84 դրական եզրակացությունը և «ՍԱՊՍԱՆ ԳՐՈՒՊ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության տնօրեն Վահան Գևորգյանի լիազորված անձ Վահան Թումիկյանի 2022 թվականի դեկտեմբերի 12-ի դիմումը.

1.Հավանություն տալ Հրազդան քաղաքի վարչական սահմաններում գտնվող, «ՍԱՊՍԱՆ ԳՐՈՒՊ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը սեփականության իրավունքով պատկանող (անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական N 01112021-07-0014, գաղտնաբառ՝ HARDBAD5GQVA) Ջրառատ թաղամասի 6.49489 հա մակերեսով գյուղատնտեսական նպատակային նշանակության վարելահողից 3.5հա մակերեսով հողամասի նպատակային նշանակությունը գյուղատնտեսականից փոփոխել արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության օբյեկտների նպատակային նշանակության, իսկ գործառնական նշանակությունը՝ արդյունաբերական օբյեկտների՝ մանկական սննդի գործարան կառուցելու նպատակով:
2.Հանձնարարել Հրազդանի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և հողաշինության բաժնին սահմանված կարգով հողամասի նպատակային նշանակության փոփոխությունը պետական գրանցում ստանալուց հետո ընդգրկել Հրազդան համայնքի հողային ֆոնդի տարեկան ընթացիկ հաշվառման տվյալներում, համայնքի հողային հաշվեկշռում, արտացոլել համայնքի ընթացիկ քաղաքաշինության քարտեզում:
3.«ՍԱՊՍԱՆ ԳՐՈՒՊ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը՝ եռամսյա ժամկետում համայնքային բյուջե վճարել 3.5հա մակերեսով հողամասի նպատակային նշանակության փոփոխման պահին առկա կադաստրային արժեքի տարբերությունը:
4.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրը:

Կողմ-18 Դեմ-0 Ձեռնպահ-1

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 76/

Լսեցին
ՀՐԱԶԴԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 10-Ի N 43 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԳՈՒՐԳԵՆ ՀԱԿՈԲՅԱՆ/

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով.

1. Հրազդան համայնքի ավագանու 2023 թվականի մարտի 10-ի «Հրազդան համայնքին սեփականության իրավունքով պատկանող հողամասերը մրցութային կարգով

վարձակալության իրավունքով օգտագործման տրամադրելու մասին» N 43 որոշման հավելվածի 15-րդ կետում նշված «17.9265» թիվը փոխարինել «17.92765» թվով:
2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրը:

Կողմ-17 Դեմ-0 Ձեռնպահ-2

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 77/

Ավագանու անդամներ՝

ՍԱՖԱՐՅԱՆ ՎԱՐՈՒԺԱՆ

ՄՈՒՐԱԴՅԱՆ ԽԱՉԻԿ

ԲԱԴԱԼՅԱՆ ԹԵՀՄԻՆԵ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՍԱՄՍՈՆ

ՂԱՋԱՐՅԱՆ ԱՆԻ

ՄԱՐԳԱՐՅԱՆ ՄԵՐՈՒԺԱՆ

ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ՍՈՒՍԱՆՆԱ

ԳԵՎՈՐԳՅԱՆ ԱՆԴՐԱՆԻԿ

ՄԵՍՐՈՊՅԱՆ ՎԱՀՐԱՄ

ՀԱԿՈԲՅԱՆ ԼՈՒՍԻՆԵ

ՄԱՐԳԱՐՅԱՆ ԱՆԱՀԻՏ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԱՐԱ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԱՄԱԼՅԱ

ԳՅՈՒՐՋՅԱՆ ԳԵՎՈՐԳ

ԿԱՍՊԱՐՅԱՆ ՂԵՎՈՆԴ

ՍԻՐՈՒՆՅԱՆ ԱՐՍԵՆ

ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ԱՆԱՀԻՏ

ԽԱՉԱՏՐՅԱՆ ԱՐՇԱՎԻՐ

ԱՍՐՅԱՆ ԱՇՈՏ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ՝

Վ. ՍԱՖԱՐՅԱՆ՝ _____

Նիստն արձանագրեց՝ Ռ. Դանիելյանը _____

Հավելված
Հրազդան համայնքի ավագանու
2023 թվականի ապրիլի 13 -ի
N72 որոշման

Հավելված
Հրազդան համայնքի ավագանու
2022 թվականի դեկտեմբերի 9 -ի
N 215 որոշման

2023 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿ

Հրազդանի համայնքապետարանի <<Կոմունալ տնտեսություն, աղբահանություն և սանմաքրում>> հիմնարկի հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափը

Աշխատակիցների թվաքանակը՝ 76

Հ/հ	Կազմակերպության անվանումը	Հաստիքի անվանումը	Հաստիքային միավորը	Պաշտոնային դրույքաչափ	Աշխատավարձի չափը
1	*2*	*3*	*4*	*5*	*6*
1	<<Կոմունալ տնտեսություն, աղբահանություն և սանմաքրում>> հիմնարկ	Տնօրեն	1	333,000	333,000
2		Գլխ. մասնագետ - տնօրենի օգնական	1	197,000	197,000
3		Գլխավոր հաշվապահ	1	222,000	222,000
4		Հաշվապահ	1	105,000	105,000
5		Մեքենա-մեխանիզմների պա - տասխանատու	1	315,000	315,000
6		Գլխ. մասնագետ	4	135,000	540,000
7		Մասնագետ	1	105,000	105,000
8		Մեխանիզատոր / հատուկ տեխնիկա/	3	328,000	984,000
		Մեխանիզատոր / հատուկ տեխնիկա/	1	250,000	250,000
9		Մեխանիզատոր	1	200,000	200,000
10		Մեխանիզատոր	9	130,000	1,170,000
11		Վարորդ	9	130,000	1,170,000
12		Վարորդ	9	105,000	945,000
13		Բանվոր	14	120,000	1,680,000
14		Բանվոր	13	105,000	1,365,000
15		Ավտոփականագործ	1	130,000	130,000
16		Ավտոէլեկտրիկ	1	200,000	200,000
17		Պահեստապետ	1	105,000	105,000
18		Պահակ	2	105,000	210,000
19		Շարժիչագործ /մատորիստ/	1	250,000	250,000
20		Էլ. եռակցող	1	150,000	150,000
	Ընդամենը		76		10,626,000

Հավելված
Հրազդան համայնքի ավագանու
2023 թվականի ապրիլի 13 -ի
N73 որոշման

Հավելված
Հրազդան համայնքի ավագանու
2022 թվականի դեկտեմբերի 9 -ի
N 216 որոշման

ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿ

<<Մաքուր Հրազդան>> համայնքային ոչ առևտրային կազմակերպության հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը

Աշխատակիցների թվաքանակը՝ 72

Հ/հ	Կազմակերպության անվանումը	Հաստիքի անվանումը	Հատիքայի ն միավորը	Պաշտոնային դրույքաչափը	Աշխատավարձի չափը
1	2	3	4	5	6
1	<<Մաքուր Հրազդան >> ՀՈԱԿ	Տնօրեն	1	333,000	333,000
2		Փոխտնօրեն	1	155,000	155,000
3		Հաշվապահ	1	166,000	166,000
4		Առաջատար մասնագետ	1	150,000	150,000
5		Մասնագետ	5	105,000	525,000
6		Պահեստապետ	1	110,000	110,000
7		Էլ. փականագործ	1	105,000	105,000
8		Բանվոր	11	105,000	1,155,000
9		Վարորդ	2	105,000	210,000
10		Վարորդ	2	110,000	220,000
11		Վարորդ	1	200,000	200,000
12		Բարձիչավար	1	110,000	110,000
13		Ծաղկաբույծ	3	105,000	315,000
14		Հավաքարար	34	105,000	3,570,000
	Ընդամենը		65		7,324,000
1		Բանվոր /այլընտրանքային ծառայող/	7	30,000	
	Ընդամենը		72		7,324,000

Հավելված՝
Հրազդան համայնքի ավագանու
2023 թվականի ապրիլի 13 -ի
N 74 որոշման

Հավելված՝
Հրազդան համայնքի ավագանու
2022 թվականի դեկտեմբերի 09-ի
N 218 որոշման

ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿ

ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ <<ՀՈՒՂԱՐԿԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ,ԳԵՐԵԶՄԱՆԱՏՆԵՐԻ ԵՎ ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐԻ ՊԱՀՊԱՆՄԱՆ, ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆ>>ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

Աշխատակիցների թվաքանակը՝ 28

Հ/հ	Կազմակերպության անվանումը	Հաստիքի անվանումը	հաստիքային միավորը	Պաշտոնային դրույքաչափը	Աշխատավարձի չափը
1	2	3	4	5	6
1	ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ <<ՀՈՒՂԱՐԿԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ,ԳԵՐԵԶՄԱՆԱՏՆԵՐԻ ԵՎ ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐԻ ՊԱՀՊԱՆՄԱՆ, ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆ>>ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ	Տնօրեն	1	333000	333000
2		Գլխ. հաշվապահ	1	105000	105000
3		մասնագետ	2	105000	210000
4		Գործավար	1	105000	105000
5		Հսկիչ	5	105000	525000
6		Վարորդ-մեխանիզատոր	2	147200	294400
7		Բանվոր	13	105000	1365000
8		Մաքրուհի	3	105000	315000
	Ընդամենը		28		3252400

Հավելված
Հրազդան համայնքի ավագանու
2023 թվականի ապրիլի 13-ի
N 75 որոշման

Հավելված 22
Հրազդան համայնքի ավագանու
2022 թվականի դեկտեմբերի 9-ի
N 238 որոշման

ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿ
ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ <<ՎԱՀԵ ՉԱՔԱՐՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ՄԱՐԶԱՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ>> ՀԻՄՆԱՐԿ

Հ/հ	Կազմակերպության անվանումը	Հաստիքի անվանումը	Հաստիքային միավորը	Պաշտոնային դրույքաչափը	Աշխատավարձի չափը
1	2	3	4	5	6
1	Հրազդանի համայնքապետարանի «Վ.Չաքարյանի անվան երիտասարդական մարզամշակութային ուսումնական կենտրոն»	Տնօրեն	1	208,000	208,000
2		Ուսմասվար	1	110,000	110,000
3		Գլխավոր հաշվապահ	1	120,000	120,000
4		Բուժքույր	1	105,000	105,000
5		Մարզիչ թաեքվոնդո	1	120,000	120,000
6		Մարզիչ բոքսքարատե	1	120,000	120,000
7		Մարզիչ բազկամարտ,ուժային եռամարտ	2	120,000	240,000
8		Մարզիչ ծանրամարտ	1	120,000	120,000
9		Մարզիչ ձյուդո	2.5	120,000	300,000
10		Խմբավար կար ու ձև.	1	105,000	105,000
11		Խմբավար խոհարարութ.	1	105,000	105,000
12		Խմբավար ասեղնագործության, տիկնիկագործության, նկարչության	1	105,000	105,000
13		Խմբավար վարսահարդ.	1	105,000	105,000
14		Տնտեսվար	1	105,000	105,000
15		Հավաքարար	2	105,000	210,000
16		Պահակ	1	105,000	105,000
	Ընդամենը		19,5		2,283,000

1. ԽՄԲԱՀ կամ ՀՀ վաստակավոր մարզչի կոչում ունենալու դեպքում տրվում է լրավճար՝ 15000 (տասնհինգ հազար) ՀՀ դրամի չափով:

2. ԽՄԲԱՀ կամ ՀՀ սպորտի վարպետի կոչում ունենալու դեպքում տրվում է լրավճար՝ 3000 (երեք հազար) ՀՀ դրամի չափով: